



ՑԱՆՑԱՆԵՏ «MAVIC» ՏԵՍԱԿԻ ԿՈՊՏԵՐԻ ՀԱՄԱՐ

Ժամանակակից մարտի պայմաններում, թռչող քվադրոկոպտեր-դրոնների դեմ պայքարը ձեռք է բերել խիստ արդիական նշանակություն: Էլեկտրոնային ճնշման ժամանակակից միջոցները թանկ են և դժվար է արտադրել: Միննույն ժամանակ, ցանցանետերն արդեն իրենց դրսևորել են որպես լուրջ սպառնալիքին հակազդելու արագ, արդյունավետ և էժան միջոց:

I. Նշանակությունը

«Mavic» տիպի կվադրոկոպտերների համար մշակված սարքը նախատեսված է ցանցանետման միջոցով հակառակորդի քուփտեր տիպի ԱԹՄ-ների դեմ պայքարելու համար:

Սարքի զանգվածային բնութագիրը:

Հավաքված սարքի քաշը՝ 700 գ,

Սարքի բարձրությունը՝ 180 մմ,

Սարքի հիմքում գտնվող շառավիղը 300 մմ է:

Օգտագործման համար պատրաստի սարքի տեսքը



Լուսանկար 1

ԱԹՄ-ից ցանցանետման պահը



Լուսանկար 2

II. Սարքի պատրաստման համար անհրաժեշտ նյութեր

1. Որսորդի ազդանշանի մեկնարկային սարք – 1 հատ,



Լուսանկար 3

2. Պոլիպրոպիլենային խցափակիչ D40 մմ առանց պարուրակի -1 հատ,



Լուսանկար 4

3. Ներքին և արտաքին պարուրակներով վռան 1/2" 3/8 " չափի -1 հատ.



Լուսանկար 5

4. Ներքին և արտաքին պարուրակներով վռան 1/2" չափի -1 հատ,



Լուսանկար 6

5. Ներքին պարուրակով պոլիպրոպիլենային կցորդիչ 40 * 1 չափի -1 հատ,



Լուսանկար 7

6. Չարմիրավորված PN20 խողովակ 3.4 մմ պատի հաստությամբ – 1 մ,



Լուսանկար 8

7. Ցանցի փաթեթավորման կոնտեյներ (*CD -սկավառակներ*) – 1 հատ



Լուսանկար 9

8. Փայտի ինքնակտրող պտուտակ 13 մմ-1 հատ,



Լուսանկար 10

9. Մեկուսիչ ժապավեն – 1 կծիկ,



Լուսանկար 11

10. Մեկ պատանի ձկնորսական ցանց – 1,8 * 2 մ,




Լուսանկար 12

11. Պարուրակային ձայնային փամփուշտ (*որսորդի ազդանշան «Гром»*) - 1 հատ,



Լուսանկար 13

12. Ամրանից պատրաստված ծանրուկներ (յուրաքանչյուրը 17 գ) - 8 հատ,



Լուսանկար 14

13. Նեյլոնե (կապրոնե) Թել - 400 սմ,




Լուսանկար 15

III. Սարքը պատրաստելու գործիքներ

1. Պրոպիլենային խողովակների կտրիչ և պոլիպրոպիլենային խողովակների ու կցամասերի եռակցման սարքավորում - 1 լրակազմ,
2. Անկյունները հղկող մեքենա - 1 հատ,
3. Պտուտակահան - 1 հատ,
4. Գայլիկոն մետաղի համար - 1 հատ:


IV. Սարքի պատրաստումը

1. Նախքան սարքի պատրաստման աշխատանքները սկսելը միացրեք պոլիպրոպիլենային խողովակների եռակցման սարքը և թողնել, որ այն տաքանա:
2. Օգտագործելով խողովակի կտրիչը, կտրեք պոլիպրոպիլենային PN20 խողովակը (լուսանկար 8) ութ հավասար հատվածների, յուրաքանչյուրը 125 մմ երկարությամբ:
3. 1/2" - 1 " վրանին ամրացրեք կցորդիչի (լուսանկար 6):
4. փամփուշտի տակ գտնվող նստատեղի կողմից մեկնարկային սարքի վրա (լուսանկար 3) ամրացրեք 1/2" 3/8" վրանը (լուսանկար 5): Դա անելու համար հարկավոր է մեկնարկային սարքի եզրը փաթաթել մեկուսիչ ժապավենով (լուսանկար 11), որպեսզի վրանը չպատվի և ջանք գործադրելիս դուրս չգա:




Լուսանկար 16

5. Մեկնարկային սարքի ետնամասում տեղադրեք և ամրացրեք կվադրոկոպտերի վարնետքի համակարգը (լուսանկար 17):



Լուսանկար 17


6. Մեկնարկային սարքի ձգանը գործարկելու համար վարնետման համակարգի օժանդակ շարժաբերի վերջնամասում կցեք կեռիկավոր մետաղալար (լուսանկար 18):




Լուսանկար 18

7. Եռակցման սարքի տաքացնելուց հետո գոդեք կցորդիչը և խցափակիչը՝ համաձայն եռակցման մեքենայի հրահանգների: Պոլիպրոպիլենային խողովակի բո-

լոր ութ հատվածները գոդեք ստացված դետալի մեջ, նախապես դրանք հավասարաչափ բաշխելով իրանի վրա (հատվածների միջև անկյունը պետք է լինի 45°): Խողովակների հատվածների թեքայնությունը հորիզոնի նկատմամբ դեպի գետին պետք է լինի առնվազն 25° : Խողովակների գոդման աշխատանքներն ավարտելուց հետո անհրաժեշտ է խցանել դրանց անցքերը և փչելով համոզվել, որ ստացված մասում օդի ելքի այլ ուղիներ չկան:




Լուսանկար 19




Լուսանկար 20


8. Ինքնակտրող պտուտակի միջոցով խցափակիչին ամրացրեք ցանցի փաթեթավորման կոնտեյները: Որպես կոնտեյներ կարող եք օգտագործել CD սկավառակների փաթեթավորման կափարիչը, պլաստիկ դույլի հատակը կամ բնութագրերով նման այլ տարրեր:



Լուսանկար 21




Լուսանկար 22



Լուսանկար 23


9. Անկյունները հղկող մեքենայի կամ հեղուսակտրիչի օգնությամբ, պատրաստեք մինչև 3 սմ երկարությամբ և յուրաքանչյուրը 17 գ քաշով ութ ծանրուկ, որի տրամագիծը պետք է համապատասխանի պոլիպրոպիլենային խողովակի ներքին տրամագծին: Անհրաժեշտ տրամագծի ամրանների բացակայության դեպքում թույլատրվում է ծանրուկներ պատրաստել այլ նյութերից, բայց քաշը չպետք գերազանցի 17 գ-ը: Բացի այդ, ծանրուկները պետք է կիպ տեղավորվեն խողովակի հատվածների մեջ: Կապրոնե թելը թելելու համար ծանրուկների ծայրերում անհրաժեշտ տրամագծի անցքեր փորել:




Լուսանկար 24

10. Ձկնորսական ցանցից կտրեք 2x2 մ չափի մի կտոր: Այդ կտորից հեռացրեք լողանները: Օգտագործելով կապրոնե թելը, ցանցի անկյուններին կապեք չորս ծանրուկներ: Եվս չորս ծանրուկներ կապեք ցանցի յուրաքանչյուր կողմի մեջտեղում:

11. Ջգուշորեն, կանխելով միահյուսումը, ցանցը դրեք կոնտեյնների մեջ: Միննույն ժամանակ, ծանրուկները թողեք դրսում: Խաչաձև տեղադրեք երկու կտոր կապրոնե թել (40 սմ երկարությամբ) կոնտեյնների վերևում, իսկ թելի եզրերը տեղադրեք հակառակ խողովակների ելքային անցքերի մեջ: Դա անհրաժեշտ է, որպեսզի քվադկոպտերի թռիչքի ընթացքում ցանցը դուրս չգա կոնտեյններից: Խողովակների ելքային անցքերում կիպ տեղադրեք ծանրուկները:



Լուսանկար 25




Լուսանկար 26

V. Ցանցանետ սարքի նախապատրաստումը և կիրառումը


ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՍԱՐՔՈՒՄ ՊՏՈՒՏԱԿՎԱԾ ՓԱՄՓՈԻՇՏԸ ԳՈՐԾԱԴՐԵԼ, ՄԻԱՅՆ ՔՎԱԴՐՈԿՈՊՏԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԱՌԱՋ:

1. Փամփուշտը (լուսանկար 13) պտտելով մտցրեք մեկնարկային սարքի մեջ (լուսանկար 3):

2. Կցորդիչը խողովակներով (լուսանկար 26) պտտելով միացրեք մեկնարկային սարքին:



Լուսանկար 27



Լուսանկար 28

3. Կախք վարնետքի սարքը կվաղորդկոպտերից:



Լուսանկար 29

Քվաղկոպտերին հոսանք մատակարարելուց հետո համոզվեք, որ նրա լապտերն անջատված է, և որ ոչ մի լույս չի ընկնում վարնետող համակարգի ֆոտոէլեմենտի վրա: Դրանից հետո քաշեք մեկնարկային սարքի ձգանը և հոսանք մատակարարեք վարնետման համակարգին: Գործարկեք քառակոպտերը և ուղղեք այն դեպի թիրախը: Թիրախից բարձր լինելու դեպքում օպերատորը պետք է ազդանշան ուղարկի հեռակառավարման վահանակից՝ կվաղկոպտերի լապտերը միացնելու համար, որից հետո վարնետք համակարգի օժանդակ շարժաբեր լծակը բաց կթողնի մեկնարկային սարքի ձգանը: Երբ պարկուճը պայթեցվի, ծանուկները տարբեր ուղղություններով դուրս կթռչեն և իրենց հետ միասին կքաշեն ցանցը:

VI. Եզրակացություն

Մեկ անձի կողմից սարքը պատրաստելու և շահագործելու համար պահանջվում է 2 ժամ, եթե նա վերապատրաստված է և փորձառու, և ապահովված է բոլոր անհրաժեշտ նյութերով (բաղադրամասերով) ու գործիքներով: Ցանցանետ սարքի պատրաստման նյութերը առկա են ազատ վաճառքում:

Մարքի կիրառումը հնարավորություն կտա, ի լրումն մարտական այլ մեթոդների, արդյունավետորեն հակազդել հակառակորդի կոպտեր տիպի ԱԹՄ-ներին:

Աղբյուրը՝ [Сеткомёт для Мавика своими руками, инструкция. 06.2024.](#)